ա) Ինչից ե ստացվում ելեկտրական հոսանքը: Զրույցի միջոցով պարզել, թե տշակերտները հոսանքի վո՞ր գործողությանն են ծանոթ: Լուսավորության ցանցի ուղղված հոսանքի միջոցով ցուցադրել նրա մեխնիկական, ջերմային, քիմիական և մագնիսական աղղեցությունները: Աշակերտների ներկայությամբ հավաքել վորեւ գալվանական ելեմենտ և ցուցադրել, վոր նրանից, ինչպես և ակտումուլյատորից (առանց կառուցումը բացատրելու) կարելի յե ստանալ նույն մեխնիկական, ջերմային, քիմիական և մագնիսական աղղեցությունները, վորսկիսին ստանում ենք ցանցի հոսանքից: Գաղափար ելեկտրական եներգիայի

մասին, գաղափար հոսանքի մասին, վորպես ելեկտրոնական հոսութիւնի մասին (3 ժամ) :

բ) Փորձի միջոցով մարմինները բաժանել հաղորդիչների և մեկուսիչների: Մատնանշել, վոր այս բաշխումը պայմանական եւ Պարզել, թե ինչ և ելեկտրական հոսանքի շղթան, ինչ եւ նշանակում շղթան փակել ու բացել: Շղթայի բաղադրիչ մասերը (հոսանքի աղբյուր, գեներատոր, լարեր, հոսանքի եներգիան սպառող գործիքներ, գործիքներ հոսանքը կառավարելու համար):

գ) Տարբեր տեսակի փակիչները: Աքեմատիկ պատկերացումները: Շղթայի սքեմայի գծադրումը (1 ժամ) :

դ) Տանիինգերորդ լաբորատոր աշխատանք. Շղթայի տարբեր բաղադրիչ մասերի դիտումը. շղթայի կազմելը, շղթայի միացումը և անջատումը (1 ժամ) :

յե) Դիմիական կամ մագնիսական աղղեցությունից յեղակացություն հանել հոսանքի ուղղության մասին և անուններ դնել հոսանքի աղբյուրի բնեուներին:

Զաղափար գալվանոմետրի մասին, իրու մի գործիքի, վորի միջոցով իմացվում եւ հոսանքի գոյությունը և ուղղությունը շղթայի մեջ (1 ժամ) :

զ) Գաղափար ելեկտրականության քանակի մասին: Ելեկտրականության քանակի միավորը—կուլոն:

Գաղափար հոսանքի ուժի մասին: Հոսանքի ուժի միավորը—ամպեր: Գաղափար ամպերմետրի մասին (3 ժամ) :

Տանիինգերորդ լաբորատոր աշխատանք. Ամպերմետրի ցուցումների սուստումը ըստ հոսանքի քիմիական աղղեցության: Ցուցադրել, վոր շղթայի բոլոր մասերում հոսանքի ուժը նույն է (2 ժամ) :

ե) Գաղափար դիմաղբության մասին:
Դիմաղբության միավորը—ոհմ: Գաղափար դիմաղբությունը չափելու մասին՝ շղթայամասը փոփոխելու միջոցով: Դիմաղբության տուփեր (մագազին) (2 ժամ) :

ը) Հաղորդիչի դիմաղբության որենքները՝ կախումը յերկարությունից, կտրվածքից, նյութից (2 ժամ) :

թ) Նյութի տեսակարար դիմաղբությունը: Հաղորդիչի դիմաղբության փորձուլը (2 ժամ) :

ժ) Ուսուատաներ (1 ժամ) :

3. ՀՈՍԱՆՔԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Գաղափար լաբումի մասին: Լարումի միավորը—վոլտ: Հոմի որենքը շղթայի վորեւ մասի համար: Ջոուլ-լենցի որենքը: Գաղափար վոլտմետրի կառուցվածքի մասին: Հոսանքի աշխատանքի և հորության բանաձերը: Ելեկտրական ջերմացնող գործիքներ, ելեկտրական զոդում, ելեկտրական լուսավորություն (13 ժամ) :

Տանիինգերորդ լաբորատոր աշխատանք. Բնտրել վորեւ թեմա, վորը կապված լինի կամ Ոհմի որենքի, կամ Ջոուլ-լենցի որենքի հետ:

Եքսկուրսիա դեպի ելեկտքողողման ցեխը (2 ժամ) :

4. ՀՈՍԱՆՔԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՃԵՍՏԱԿԱՆ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԱՍԻՆԵՐ

ԲՆԱԿԱՆ մագնիս: Գաղափար պողպատե ձողի մագնիսացման մասին (1 ժամ) :

Տանիինգերորդ լաբորատոր աշխատանք. Բնեուներ և չեղոք գոտի: Միւնույն մագնիսի յերկու բնեուների տարասեռությունը: Մագնիսի գիրքափորումը տարածության մեջ: Բնեուների անունները: Բնեուների փոխազդեցությունը: Մագնիսական դաշտ: Ուժագիծ: Ուղիղ և պայտաձև մագնիսի ուժագծերը: Կողմնացույց (կոմպաս) (2 ժամ) :

5. ԵԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ա) Երշտեղի փորձը՝ հոսանքի աղղեցությունը մագնիսական սլաքի վրա: Ուղղագիծ հոսանքի և մուենոփելի մագնիսական դաշտը: Ուղիղ մագնիսը նման եւ այն սոլենոիդին, վորի միջով հոսանք և անցնում (2 ժամ) :

բ) Մագնիսացումը հոսանքով: Ելեկտրոմագնիս. նրա կիրառումը՝ ելեկտրոմագնիսական կոռլուկ (կրան), հեռագիր, հեռախոս, զանգ (4 ժամ) :

դ) Փորձով ցուցադրել մագնիսների և հոսանքատար կոճերի փոխազդեցությունը:

Յուցադրել Ելեկտրոմոտորի սկզբունքը. յուցադրել ամպեր-մետրի սկզբունքը (2 ժամ) :

6. ԵԼԵԿՏՐՈՄԱԳՆԻՍՏՐԱԿԱՆ ԻՆԴԻԿԱՑԻԱՆ

ա) Ֆարադէյի հայտնագործման պատմությունը (1 ժամ) :
բ) Տանիներորդ լարորատոր աշխատանք. Հոսանքի ինդուկցիայի հիմնական յերևությունը, յերբ լողուկցիան տեղի յեռնենում մագնիսի կամ հոսանքի միջոցով (2 ժամ) :

դ) Լենցի կանոնը (1 ժամ) :

դ) Գալարի (ՎԻՏՈՒ) պատումը մագնիսական դաշտում: Գաղափար փոփոխական հոսանքի մասին: Դինամոյի կառուցվածքի սկզբունքը (5 ժամ) :

յ) Փորձեր հոսանքի տրանսֆորմացիայի վերաբերյալ: Տրանսֆորմատորների կառուցվածքը: Ելեկտրական եներգիայի հաղորդումը հեռավորության վրա: Գաղափար ելեկտրոններգիայի արտադրության և քաշման մասին (4 ժամ) :

Եքսկուրսիա գեպի ելեկտրոկայան:

ԶՈՐՈՌՈՒԹԻ ԲԱԺԻՆ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ

1. ԼՈՒՅՍԻ ՏԱՐԱԾՎԵԼԻ ՀԱՄԱՍԵՐԻ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ
Լույսի ուղղագիծ տարածվելը: Ստվերի և կիսաստվերի կառուցումը: Նկարի միջոցով բացատրել արեգակի և լուսի իտարումները (2 ժամ) :

2. ՅԵՐԿԱՌԻ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՅԵՐԵՎԱՆԻՑԹՔ

ա) Յուցադրել, վոր յերկու միջավայրերի սահմանում միաժամանակ տեղի յեն ունենում և՝ անդրադարձում, և՝ բեկում: Անդրադարձման որենքները (2 ժամ) :

բ) Հարթ հայելու մեջ ստացվող պատկերը: Պերիսկոպ: Անդրադարձում սփերիկ հայելիներից: Գոպավոր սփերիկ հայելու մեջ ստացվող պատկերը: Պրոյեկտոր (2 ժամ) :

3. ԲԵԿՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

Յուցադրել ճառագայթների լնիթացքը զուգահեռ նիստեր ունեցող ասլակե թիթեղի մեջ, պրիզմայի մեջ: Գաղափար լուսակարչական ապարատով և պրոեկցիոն (մոգական) լազերի մասին: Գաղափար աչքի կառուցվածքի մասին (4 ժամ) :

4. ՍՊԻԾԱԿ ԼՈՒՅՍԻ ՏԱՐԱԾՎԱԼՈՒԹՈՒՄԸ ԳՈՒՅՑՆԵՐԻ

Յուցադրել սպիտակ լույսի տարրալուծումը գունավոր ճառագայթների. սպեկտրալ ճառագայթները գումարելով ստանալ սպիտակ լույս: Փորձով բացատրել թափանցիկ և անթափանցիկ մարմինների գույները: Գաղափար ինֆրակարմիր և ուլտրամանիշակալույն ճառագայթների մասին:

Կրկնություն՝ 8 ժամ: Եքսկուրսիաներին՝ 6 ժամ:

Ուքերորդ գասարան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ժամ)

Ճարժումը նյութի գոյության ձևն է: Ճարժման բազմազան ձևերը: Ճարժման մի ձևի փոխարկումը մյուս ձևերին: Մեխանիկական շարժում:

I. ՈՒՂՂԱԳԻԾ ՇԱՐԺՈՒՄ (2 ժամ)

1. Հավասարաչափ և սովորագիծ շարժում. Հավասարաչափ շարժման ճանապարհը, ժամանակն ու արագությունը: Արագության միավորները՝ սմ/վայրկ, մ/վայրկ:

Հավասարաչափ շարժման հավասարումը: Հաստատուն արագության գրաֆիկը: Հավասարաչափ շարժման ճանապարհի գրագիրը:

2. Հավասարաչափ փոփոխական շարժում. Միջին արագությունը տվյալ ժամանակամիջոցի համար: Արագությունը տվյալ մոմենտում, ճանապարհի տվյալ կետում: Արագացում: Արագացման միավորները՝ սմ/վայրկ, մ/վայրկ: Արագության գրագիրը: Հավասարաչափ արագացող և հավասարաչափ դանդաղող շարժման արագության և ճանապարհի բանաձևերը:

3. Մարմնի շարժումը ծանրության ուժի ազդեցության տակ. Մարմնի աղատ անկման որենքները (Գալիլեյ): Ուղղաձիգ դեպի վեր նետած մարմնի շարժումը:

Բ Ա Տ Ր Ա Կ Ա Ն
(8—10 դասարաններ)

8—10-րդ դասարանների Փիզիկայի դասընթացը հանդիսանում է Փիզիկայի սխստեմատիկ դասընթացի յերկրորդ կոնցենտրը և նրա խնդիրն ե՝

1. Լրացնել, խորացնել և սխստեմի վերածել Փիզիկայի վերաբերյալ այն գիտելիքները, վոր աշակերտները ձեռք են բերել վոչ լրիվ միջնակարգ դպրոցում:

2. Ֆիզիկական հերեւությունների տեսությունների փորձի վրա հիմնված շարադրումը, վորոնք անհրաժեշտ են մարքս-լենինյան աշխարհըմբուռնում մշակելու համար:

3. Ժամանակակից տեխնիկայի նվաճումների և բնության յերեսույթների բացատրությունը՝ Փիզիկայի վերաբերյալ գիտելիքների հիման վրա:

8—10-րդ դասարանների Փիզիկայի դասընթացը, ընդուրկելով մի շարք նոր հարցեր, վորոնք բոլորովին չեն շոշափել 6—7 դասարաններում, միաժամանակ պարունակում են առանձին հարցեր, վորոնք արդեն ծանոթ են աշակերտներին տարրական ձեվով: Վերջինների մշակումը թե՛ ըստ բնույթի և թե՛ ըստ ծավալի պետք են յապես տարբերվի վոչ լրիվ միջնակարգ դպրոցի դասընթացից:

Այն ժամանակ, յերբ Փիզիկայի սկզբնական ուսումնասիրության ժամանակ Փիզիկայի որենքների արտածման համար իբրև հիմնական յեղանակ պետք են ծառայի փորձը, աշակերտների ինքնուրույն լարորատոր աշխատանքների և դասաստուի ցուցադրումների ձեռով, յերկրորդ կոնցենտրում աշակերտներին պետք են ցույց տալ մաթեմատիկական մեթոդի նշանակությունը վոչ միայն Փիզիկական որենքներն արտահայտելու համար, այլև այդ որենքները հաստատելու և նրանց անալիզի համար՝ այն դեպքերում, յերբ այդ առանձին դժվարություն չի ներկայացնում:

Այսպես, որինակի համար, մաթեմատիկորեն կարելի յե ար-

տածել հավասարաչափ-փոփոխական շարժման որենքները, լուսավորվածության որենքները, լինզի (լոսպնակի) լծորդ Փոկուների հավասարումը և այլն:

Բայց ունենալով պարտադիր խնդիր՝ որինակներով ցույց տալ մաթեմատիկայի նշանակությունը Փիզիկայի որենքներն արտածելու հարցում, Փիզիկայի դասատուն չպետք են հրապուրովի այդ կողմով, վոչ մի դեպքում չպետք են նպատակ դնել Փիզիկայի դասավանդումը մաթեմատիկայացնելը, հիշելով, վոր ընդհուպ մինչեւ 10-րդ դասարանը Փիզիկայում փորձը պետք են վըճաղական դեր ունենա:

Դարձնթացի վորոշ տեղերում աշակերտների մաթեմատիկական պատրաստությունը կարող են մնացած լինել Փիզիկայի պահանջներից:

Այսպես, հավասարաչափ-փոփոխական շարժումն անցնելու ժամանակ աշակերտները գեռ չեն գիտենա լրիվ քառակուսի հավասարումներ լուծելը, զուգահեռադի կանոնով վեկտորների գումարումն ուսումնասիրելու կամ տատանողական շարժումն ուսումնասիրելու ժամանակ նրանք գեռ յետանկյունաչափություն չեն գիտենա:

Բոլոր այդպիսի դեպքերում Փիզիկայի դասաստուները պարզեցնում են իրենց աշխատանքը: Հավասարաչափ-փոփոխական շարժումն ուսումնասիրելու համար նրանք սահմանափակվում են այն պարզագույն և միաժամանակ գործնականորեն համար պատահող դեպքերով, վորոնք հանդում են վոչ լրիվ քառակուսի հալասարումներ լուծելուն: Անկյուն կազմող արագություններ կամ ուժեր գումարելու ժամանակ նրանք տալիս են հարցի փորձնական և գրաֆիկ լուծումը, առանց սեղմելու նրա բովանդակությունը: Տատանողական շարժումը քննության առնելու ժամանակ տալիս են արագության ու արագացման փոփոխության վորակական բնույթը, վորը բղխում են կառուցումից, առանց այդ մեծությունների մաթեմատիկական արտահայտություններն արտածելու:

Բայց Փիզիկական յերեսույթների ուսումնասիրությանն այդպիսի մոտեցում ունենալու դեպքում դպրոցի համար անհրաժեշտ են, վոր մաթեմատիկայի ու Փիզիկայի դասատուները համաձայնության դան, վոր մաթեմատիկայի համապատասխան մասերն անցնելու ժամանակ մաթեմատիկայի դասերին ինդիր-

ների ձեռվ մշտկվեն Փիղիկայի այն հարցերը, վորոնք իր ժամանակին Փիղիկայի դասերին չեն լուծվել համապատասխան մաթեմատիկական պատրաստություն ձեռք բերված չլինելու պատճառով :

Այսպես, որինակի համար, քառակուսի, հավասարումներն անցնելու ժամանակ պետք է լուծվեն նաև հավասարաչափ վորիական շարժման այն խնդիրները, վորոնք հանգում են լրիվ քառակուսի հավասարման : Եեղանկուն յեռանկյունիների լուծումներն անցնելու ժամանակ (յեռանկյունաչափությունից) պետք է արդյունաբար և բազագրիչ ուժերը հաշվելու, համապոր և բազագրիչ ուժերը հաշվելու (յերբ ուժերը վորեն անկյուն են կազմում) վերաբերյալ խնդիրներ :

8-րդ դասարանի ծրագրը պարունակում է մեխանիկայի ուսմունքը, ներառյալ մեխանիկական տատանումները, ալիքներն ու ձայնը : Մեխանիկայի համապատասխան տեղերում մտցված են հիգրոստատիկական որինակներ, վորոնց լուծումը պահանջում է հիգրոստատիկայի հիմնական որենքների կրկնողությունը, վորը պետք է հաշվի առնել պլանավորման ժամանակ :

9-րդ դասարանի ծրագրը պարունակում է պինդ մարմինների, հեղուկների ու գազերի մեջ տեղի ունեցող մոլեկուլյար յերեսույթների ուսմունքը, կալորիմետրական հարցերի ու թերմոդինամիկական հիմնական հասկացողության խորացումը՝ կազմած ժամանակակից ջերմային մեքենաների ուսումնասիրության հետ :

10-րդ դասարանի աշակերտների մաթեմատիկական պատրաստությունն ու ընդհանուր զարգացումը հնարավորություն են տալիս նրանց ծանոթացնել ելեկտրական և ելեկտրոսագնիսական դաշտերի հետ ավելի խորացրած կերպով, քան այդ կարելի յերանել 7-րդ դասարանում :

7-րդ դասարանի հետ համեմատած այս դասարանում միանգամայն նորից են տրված հետեյալ գլուխները . ելեկտրական հաղորդելիությունը հեղուկների ու գազերի մեջ և ելեկտրական տատանումները :

«Ճառագայթային եներգիա» բաժնում հատուկ ուշադրություն պետք է նմիւրել յերկրաչափական ուղղիկայի հիմունքների կրկնության ու խորացման :

Դասընթացը վերջանում է լուսային և ելեկտրոսագնիսական

տատանումների նույնության քննարկումով և բոլոր տեսակի եղեկտրումագնիսական տատանումների տեսությունով :

Լարուատոր աշխատանքները մտցված են ծրագրի մեջ : Ծայրահեղ գեղգում, յերբ հնարավոր չե աշխատանքը կատարել, այդ աշխատանքները կարող են փոխարինվել գասընթացի հետ կազմած այլ աշխատանքներով, բայց նրանց թիվը չպետք է փոքր բացի :

Ծրագրի բոլոր բաժիններում նշված են Փիղիկական յերեխույթների տեխնիկական կիրառությունների որինակներ, վորոնք մասամբ կարող են փոփոխվել :

Ծրագրում ամեն մի դիմին հատկացված ժամերի թվի նշանակումը մասամբ նպատակ ունի ցույց տալ տվյալ թեմայի պարզաբանման ծավալը :

ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԱԲԱՆՉԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարմինների ազատ անկման որենքները կարող են ուսումնասիրվել շարժումների որենքներից հետո, իբրև շարժման ընդհանուր որենքների կիրառման որինակներից մեկն ուժերի կոնկրետ ձևերի նկատմամբ :

Ուղղաձիգ գեղի նետված մարմնի շարժումը կարող ետեղակորպիել շարժումների գումարման գլխում :

Շուղահեռագծի կանոնով վորեն անկյուն կազմող (բացի ուղիղ անկյունից) ուժերի գումարման հարցը քննարկելիս բաշվական և սահմանափակվել փորձնական կամ գրաֆիկ յեղանակով համազորը գտնելով :

Համազորի ընդհանուր ձևն արտածել չե կարելի, վորովհետեւ աշակերտները չգիտեն շեղանկյուն յեռանկյունների լուծումները :

Տվյած ուժն իրար հետ անկյուն կազմող յերկու բազագրիչների վերածելու դիմումը դրված է կոնային ձև ունեցող անոթի մեջ հատակի վրա գործդրվող ճնշման ուժը և հեղուկի կըսից տարբերելու մասին որինակ, վորպեսզի զուգընթացքար աշակերտների հետ կրկնեն հիգրոստատիկայի հիմնական որենքը : Հիգրոստատիկական մամուլի մեջ աշխատանքների հավասարությունը քննարկելիս պետք է կրկնել Պատկալի որենքը : Հեղոր

ստատիկական կշռման յեղանակով տեսակարգար կշիռը վորոշելու լաբորատոր աշխատանքից առաջ պետք է կրկնել Արքիմեդի ու բենքը:

Ալիքային չարժման վերաբերող գլուխը պետք է անցնել ցուցադրումներով, գրաֆիկներով, ընդ վորում բացառապես վորակական կողմից (բացի $\lambda = V.T$ առնչությունից): Այստեղ կարիք չկա արտածելու վոչ տեղաշարժման բանաձևը և վոչ ել արագության ու արագացման բանաձևերը:

Նմանապես ծրագիրն անհրաժեշտ չի համարում գաղերի կինետիկ տեսության հիմնական հավասարման արտածումն ու գաղաքին հաստատունի արժեքի հաշվումը:

Գաղերի հատկությունների բաժինը յերկու մասի չբաժանելու համար, Բոյլ-Մարիոտի և Գեյ-Լյուսակի որենքները միատեղ են տրվում:

Քանի վոր մինչ այդ աշակերտները գեռ չեն լսել ընդարձակման գործակցի մասին, ապա այստեղ պետք է հասկացողություն տալ ընդարձակման գործակցի մասին, պետք է տալ ծավալային ընդարձակման գործակցի սահմանումը և արտածել վորեւ ջերմաստիճանի ժամանակ մարմնի ունեցած ծավալի բանաձևը 0 աստիճանում ունեցած ծավալի և ընդարձակման յերկանագամի (բինումի) միջոցով:

Կալորիմետրիայի բաժնում հիմնական մասն և հանդիսանում կալորիմետրական հավասարումներ կազմել սովորեցնելը: Դրա համար, ինչպես և հաջորդ բաժնի համար, անհրաժեշտ է կրկնել 6-րդ դասարանում ձեռք բերված դիտելիքները, բայց այդ կրկնողությունը կատարվում է նոր ինդրի լուծման միջոցով—ջերմային բալանսի հավասարումներ կազմելու միջոցով—և չպետք է հանդիսանա 6-րդ դասարանի ծրագրի հասարակ վերաբուժում:

Կալորիմետրիայի վերաբերյալ լարությունը աշխատանքը պետք է տարրերի 6-րդ դասարանի աշխատանքներից: Յեթե 9-րդ դասարանի աշակերտները 6-րդ դասարանում կատարել են նյութի տեսակարար ջերմունակության վորոշումը, ապա կարելի յեն նրանց առաջարկել ուժեղ տաքացած մարմնի ջերմաստիճանի կալորիմետրական վորոշումը:

Յեթե դասատուն անհրաժեշտ է համարում զնել տեսակարար ջերմունակության վորոշումը, ապա 9-րդ դասարանում պետք է հաշվի առնել նաև կալորիմետրի ջերմունակությունը:

Զերմության բաժնի վերջում նորից մտցված ե ենթագիրը ցըման և հնարավոր կենտրոնացման հասկացողությունը:

«Ելեկտրականություն» բաժնի յերրորդ գլուխում ծրագիրն առանձնապես ընդգծում է հոսանքի և մագնիսի փոխազդեցության ուսումնասիրության վորակային բնույթը, վորպեսի նշի, վոր այստեղ չի պահանջվում Բիո-Մավարի որենքի ուսումնասիրությունը: Ելեկտրականության բաժնում և ներկա ծրագրում պահանջանապես են այն բոլոր կրծատումները, վորոնք տրված ելին Փիզիկայի և աստղաբաշխության ծրագրերի վերաբերյալ 1934—1935 ուս. տարվա ցուցմունքների մեջ:

10-րդ դասարանի վերջից առողջի կառուցվածքի և ոագիռակտիվության հարցը հանված է այն նկատառումով, վոր նույն հարցերը քննարկում են 9-րդ դասարանի քիմիայի ծրագրում և գրա համար այդ ծրագրում հատկացված են մեծ թվով ժամեր, քան այդ կարելի յեր անել այս ծրագրում, և այնուհետև կրկնվում են 10-րդ դասարանի սկզբում:

II. ՆՅՈՒՏՈՒՆԻ ՇԱՐԺՄԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ (18 ժամ)

1. Մեխանիկայի զարգացման պատմական ընթացքն արտադրողականության ուժերի զարգացման հետ կապակցված:

2. Նյուտոնի առաջին որենքը՝ իներցիայի որենքը: Հանդստիչարաբերականությունը:

3. Նյուտոնի յերկորդ որենքը: Մասսա (զանդլած). մասայի միավորը: Գաղափարը ուժի մասին: Ուժի իմպուլս և չարժման քանակ: Ուժն արտահայտել մասսայի և արագացման մեջովով: Ուժի միավորը՝ դին: Միավորների սիստեմներ CGS, MTS և տեխնիկական:

4. Նյուտոնի յերրորդ որենքը՝ ազդեցության և հակազդեցության հավասարության որենքը: Մարմինների փոխազդեցության տեխնիկական ոգտագործումը:

III. ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ (10 ժամ)

1. Յերկու հավասարաչափ և ուղղագիծ չարժումների ճանապարհների գումարումը:

2. Արագությունների գումարումն ու վերածումը:

3. Հորիզոնաբար և հորիզոնի նկատմամբ վորոշ անկյունով (թեք) նետած մարմնի շարժումը (առանց հաշվի առնելու միջավայրի դիմադրությունը): Արկերի թոփչը, ավիոումբերի անկումը:

Առաջին լարորատոր աշխատանք. Ռւսումնասիրել մարմնի շարժումը պարաբոլով:

IV. ՊՏՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ (10 ժամ)

1. Հավասարաչափ շրջանային շարժում: Գծային և անկյունային արագություններ: Կենտրոնաձիգ արագացման բանաձևի արտածումը:

2. Կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժեր:

3. Կենտրոնախույս մեխանիզմներ:

V. ՆՅՈՒՏՈՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԳՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ (6 ժ.)

1. 16—17-րդ դարերի աստղաբաշխական ռւսմունքների պատմությունը:

2. Կեպէլի որենքները:

3. Նյուտոնի տիեզերական ձգողության որենքը:

Ձգողության հաստատունը:

VI. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՆԵՐԳԻԱ (10 ժամ)

1. Աշխատանք և հզորություն: Նրանց միավորները: Կիսետիկ և պոտենցիալ եներգիա:

2. Կինետիկ եներգիայի բանաձևի արտածումը:

3. Եներգիայի փոխարկման և պահպանման որենքը մեխանիկական պրոցեսներում:

VII. ՍՏԱՏԻԿԱ (26 ժամ)

1. Հավասարակշռող ուժեր: Ուժի կիրառման կետի տեղափոխումն ուժի ուղղությամբ: Համազոր: Մարմնի մի կետի վրա աղղող ուժերի գումարումը, յերբ աղղում են մի ուղիղ զծով և յերբ անկյուն են կազմում:

2. Տվյալ ուժը վերածել յերկու բաղադրիչների, վորոնքի-

րար հետ անկյուն են կազմում: Կիրառել հետևյալ դեպքերին՝
ա) ուժերի հավասարակշռությունը թեք հարթության վրա.
բ) ուժերի հավասարակշռությունը կրոնշտեյնի բարձակի վրա.
գ) ուժի աղղեցությունն առաջասարի կամ աերոպլանի թևի վրա.
դ) կոնաձև անոթի մեջ լցրած հեղուկի կողի և հատակի վրա
գործ գրած ճնշման ուժի տարրերությունը:

3. Զուղահեռ ուժերի գումարումն ու վերածումը:

4. Գալափար ուժի մոմենտի մասին:

Յերկրորդ լարորատոր աշխատանք. Պտտման առանցք ունեցող պինդ մարմնի հավասարակշռության պայմանները:

5. Մարմնի ծանրության կենտրոնը: Նրա վորոշումը փորձով:

Մարմնի տարրեր գրությունները ծանրության ուժի աղղեցության տակ, յեթե մարմնը կախված է կամ հենված է մի կետում, ունի հենման առանցք կամ հենման մակերես:

6. Ուժերի հավասարակշռության պայմանները և աշխատանքների որենքը ճախարակի, լծակի, վոլորանի, պոլիսպաստի, թեք հարթության, սեպի, պտուտակի և ջրաբաշխական մամուլի համար:

Յերկրորդ լարորատոր աշխատանք. Պոլիսպաստների ոգտակար գործողության գործակցի վորոշումը:

7. Հաղորդակից անոթների մեջ լցրած հեղուկների հավասարակշռության պայմանները:

8. Մթնոլորտային ճնշման չափումը: Ճնշման տարրեր միավորները: Բարոմետրի ոգտագործումը:

9. Տեսակարար կշիռը վորոշելու հիգրոսուստիկ յեղանակը:

Տորորդ լարորատոր աշխատանք. Հիգրոսուստիկ յեղանակը վորոշել պինդ և հեղուկ մարմնի տեսակարար կշիռը:

VIII. ՏԱՏԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ (6 ժամ)

Մաթեմատիկական ճռճանակ:

Հինգերորդ լարորատոր աշխատանք. Փորձի միջոցով արտածել ճոճանակի տատանման որենքները:

Տատանման պարբերության կախումը՝ ճոճանակի յերկարությունից և ծանրության ուժի արագացումից (բանաձևն առանց արտածման):

Թիգիկական ճոճանակ: Ճոճանակի գործածությունը ժամացույցի մեջ: Մարող և չմարող տատանումներ:

IX. ԱԼԻՔԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ (8 ժամ)

Առաձգականորեն կապված կետերի տատանումը: Լայնական և յերկայնական ալիքներ: Ալիքի յերկարությունը: Տատանման արագության, ալիքի յերկարության և տատանման հաճախականության միջև դոյություն ունեցող կապը: Հյուզենսի սկզբունքը: Ալիքների ինտերվերենց: Ալիքների անդրազարձումը և բեկումը:

X. ԶԱՅՆ (8 ժամ)

Հնչող մարմնի տատանումը: Զայնի տարածվելը: Զայնական ալիքներ: Զայնի արագությունը: Տոնի բարձրությունը և ձայնի ուժը: Զայնի տեմբը: Բեզոնանս և ուղղոնատորներ: Մեմբրան: Զայնորսներ և նրանց նշանակությունը ուազմական դորձի համար: Հիդրոֆոն:

Վեցերորդ լաբորատոր աշխատանք. Զայնային ալիքի յերկարության վորոշումը ուղղոնանսի յեղանակով:

Կրկնություն 10 ժամ, եքսկուրսիաներին՝ 3 ժամ:

ԽԵՆԵՐՈՐԳ ՊԱՍԱՐԱԿ

I. ՄՈԼԵԿՈՒԼԱՐ ՑԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԳԱԶԵՐՈՒՄ, ՀԵՂՈՒԿՆԵՐՈՒՄ ՑԵՎ, ՓԻՆԴ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ (26 ժամ)

1. Մոլեկուլար-կինետիկ քեռիայի հիմունիքները. Մոլեկուլների դոյության ապացույցը: Միջմոլեկուլային տարածությունների դոյությունը մոլեկուլների փոխադարձ ձգումը: Բրունյան շարժում: Մոլեկուլների շարժումը պինդ, հեղուկ և գազային մարմինների մեջ:

Առաջին լաբորատոր աշխատանք. Դիտել բրունյան շարժումը:

2. Գազերի հատկությունները. Գազի ճնշումը վորպես նրա մոլեկուլների շարժման արդյունք: Բոյլ-Մարիուի որենքը:
Յերկրորդ լաբորատոր աշխատանք. Փորձի միջոցով արտածել Բոյլ-Մարիուսի որենքը: Գազերի ջերմային լնդարձակումը: Գազերի որենքը:

Յերրորդ լաբորատոր աշխատանք. Փորձի միջոցով արտածել Գեյ-Լյուսակի որենքը: Ծավալային լնդարձակման գործակիցը: Գազի ծավալի բանաձեռն ամեն մի ջերմաստիճանի համար: Մարմնի խտության փոփոխումը՝ ջերմաստիճանների փոփոխման հետևանքով: Կլապեյրոնի հավասարումը: Բացարձակ զերո և ջերմաստիճանների բացարձակ սանդիւչակը (շկալան):

3. Հեղուկների հատկությունները. Մոլեկուլար ճնշումը և մակերեսային լարվածությունը հեղուկներում: Թրջող և չթրջող հեղուկներ: Կապիլյար յերկույթներ բնության մեջ և տեխնիկայում:

4. Պինդ մարմնի հատկությունները. Տարածական ցանց: Պինդ մարմնի գեֆորմացիան՝ կիրառած ուժերի ազդեցությունից: Հուկի որենքը: Դեֆորմացիաների տեսակները:

II. ԶԵՐՄՈՒՅԹՅՈՒՆ (52 ժամ)

1. Մարմինների լնդարձակումը ջերմությունից (5 ժամ). Պինդ մարմինների գծային և ծավալային լնդարձակման գործակիցը: Յերկարության և ծավալի բանաձեռն ամեն մի ջերմաստիճանի համար. կապը ծավալային և գծային գործակիցների միջև: Պինդ մարմինների լնդարձակման նշանակությունը և գրահաշառումը տեխնիկայում:

Չորրորդ լաբորատոր աշխատանք. Վորոշել պինդ մարմնի գծային գործակիցը:

Հեղուկների ծավալային լնդարձակման գործակիցը:
2 Կրկնել և խորացնել կալրիմետրիայի հիմունիքները (7 ժ.):

Հինգերորդ լաբորատոր աշխատանք. Կալրիմետրիական յեղանակով վորոշել տաքացրած մարմնի ջերմաստիճանը (2 ժամ):

3. Հալում և շողիացում. գոլորշիացում և յեռում (կրկնել և խորացնել) (10 ժամ):

4. Գոլորշիներ: Գազերի հեղուկացումը (14 ժամ). Հազեցնող և չհազեցնող գոլորշիներ: Դաշտոնի որենքը: Կրիտիկական

Հերմաստիճան: Գաղերի հեղուկացումը: Հեղուկ ող և նրա կերպումը տեխնիկայում: Ողի խոնավությունը: Խոնավաչափեր: Վեցերորդ լաբորատոր աշխատանիք. վորոշել սենյակի ողի խոնավությունը:

5. Գաղի և գոլորշու աշխատանիքը (14 ժամ): Գաղի աշխատանքը: Խորարիկ պլրոցեսի ժամանակ գաղի կատարած աշխատանքի գրաֆիկան պատկերացումը: Գաղափար գաղի աղիաբատիկ ընդարձակման մասին: Գոլորշու աշխատանքը չողեմեքենայում: Բաղմապատիկ ընդարձակման մեքենաներ: Ենթիւ այրման շարժիչներ: Դիղել: Ջերմային մեքենաների ոգու. գործ. գործակիցը: Սառեցման մեքենաներ:

Գաղափար եներգիայի ցրման և հնարավոր կենտրոնացման մասին:

Կրկնողության՝ 8 ժամ, եքսկուրսիային՝ 5 ժամ:

Տասերորդ գառարան

I. Ելեկտրականութեալին

1. Ելեկտրական դաշտ (10 ժամ). Ելեկտրականության քանակը: Կուլոնի որենքը: Ելեկտրականության քանակի ելեկտրոստատիկ միավորը: Կուլոն: Ելեկտրական դաշտ: Դաշտի լարվածությունը: Ուժալծեր: Ուժային հոսք: Գաղափար պոտենցիալի մասին: Պոտենցիալի միավորները՝ ելեկտրոստատիկ միավոր և վոլտ: Ելեկտրոռունակություն, ելեկտրոռունակության միավորներ՝ Փարագ, միկրոֆարագ և սանտիմետր: Կոնդենսատոր (խտացուցիչ): Հարթ կոնդենսատորի Փորձուլը (առանց արտածման): Տեխնիկական կոնդենսատորներ:

2. Ելեկտրական հոսանքի որենիները (12 ժամ). Հոսանքի որենիների կրկնումը: Ոհմի որենին ամրող շղթայի համար: Դիմադրության կախումը զերմաստիճանից: Հաջորդական և զուգահեռ միացումներ: Ամպերմետը և վոլտմետը: Շունտեր և լրացուցիչ գիմադրություններ: Վիտստոնի կամուրջը:

3. Մագնիսական դաշտ (6 ժամ). Կուլոնի որենքը: Մագնիսական դաշտ: Դաշտի խորուկիան: Հոսանքի մագնիսական դաշտը: Մագնիսի և հոսանքի փոխազդեցությունը (յերևոյթի վորակական ուսումնասիրությունը): Հաղորդիչի շարժումը մագնիսական դաշտում:

4. Ելեկտրոնագիտական ինդուկցիա (4 ժամ). Ինդուկցիա ուղղագիծ հաղորդիչում: Ինդուկցիոն հոսանքի լարումը: Առաջին լաբորատոր աշխատանիք. Վորոշել ինդուկցիոն հոսանքի ուղղությունն ելեկտրոմագնիսական ինդուկցիայի տարբեր դեպքերի համար: Ինդուկցիայի հիմնական որենքը: Գաղափար ինդուկցիայի մասին:

5. Ելեկտրական հոսանքը հեղուկների և գազերի մեջ (12 ժամ). Մոլեկուլների գիտոցիացիան (տարրալուծումը): Իոնների տուաջանալը լուծույթների մեջ: Ֆարադեյի ելեկտրոլիզի առաջին և յերկրորդ որենքները: Գալվանական ելեմենտներ: Ակումուլյատորներ: Կաթոդային ճառագայթներ, նրանց հատկությունները: Կանալային ճառագայթներ: Ուենտենյան ճառագայթների առաջանալը կաթոդային ճառագայթների շնորհիվ: Թերմո-փոտո-ելեկտրոնները: Կաթոդային լամպ:

Յերկրորդ լաբորատոր աշխատանիք. Վորոշել պղնձի ելեկտրո-քիմիական համարժեքը:

Յերրորդ լաբորատոր աշխատանիք. Հետազոտել անոդային հոսանքի կախումը ցանցի պոտենցիալից:

6. Փոփոխական հոսանք և ելեկտրական տատանումներ (8 ժամ). Փոփոխական հոսանքի մեքենա և մոոտոր: Գաղափար յեռափազ հոսանքի մասին: Փոփոխական հոսանքի հաճախականությունը: Կոնդենսատորի տատանողական պարպումը: Տատանողական պրոցես: Մարող տատանումները: Մարող ելեկտրական տատանումները: Ելեկտրոմագնիսական ալիքներ տարածության մեջ: Հերցի փորձերը: Գաղափար անթել հեռազբան և գեռախոսման մասին: Ելեկտրական ալիքների յերկարությունը:

II. ՃԱՐԱԳԱՅԹԱՅՑԻՆ ԵՆԵՐԳԻԱ (25 ժամ)

1. Կրկնել և խորացնել յերկրաչափական ոպտիկայի հետունքները: Լույսի տարածվելը: Լույսի արագությունը և նրա փորոշելը: Լույսի ուժը: Լուսավորություն: Փոտոմետրիա: Լույսի անդրադարձման որենիները:

Չորրորդ լաբորատոր աշխատանիք. Փորձերի միջոցով արտածել բեկման որենիները: Ներքին լրիվ անդրադարձման յերեխույթը:

2. Հավաքող և ցրող վոսպիակներ (լինզաներ). Պատկերի

Կառուցումը : Լինղաների բանաձևերը : Լինղաների ոպտիկական
ուժը :

Հինգերորդ լարորատոր աշխատանք . Լինղաների բանաձևերի
հետազոտումը :

3. Դիսպերսիա (տարրալուծում) . Սպեկտրի յերևույթը :
Սպեկտրների տեսակները : Կիրխհոփի որենքը : Մարմնի գույնի
սպեկտրալ անալիզը : Սպեկտրի ինֆրակարմիր և ուլտրամանի-
շակագույն մասերը :

4. Աչքը վորպիս ոպտիկական գործիք . Տեսողություն յեր-
կու աչքով : Տեսողության անկյուն :

Ոպտիկական գործիքներ , նրանց նշանակությունը : Միկրոս-
կոպի , հեռադիտակի և տելեսկոպի կառուցվածքը :

5. Լուսեղեն և ելեկտրոմագնիսական ալիքների նույնությու-
նը . Ռենտգենյան ճառագայթներ , նրանց առաջանալը և հատկու-
թյունները : Ելեկտրոմագնիսական սպեկտր :

Կրկնության՝ 8 ժամ , եքսկուրսիային՝ 6 ժամ :

ՀՀ Ազգային գրադարան



NL0977547

28 АВГ. 1936
ԳԻՒՆ 70 Կ.

591

11

28030



Программы средней школы

Ф И З И К А

Гиз ССР Армении, Эривань, 1936 г.